

Իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման մեթոդաբանության շուրջ

Վիրաբյան Գ. Մ.

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ
gevorg.virabyan77@gmail.com

Վճռորոշ բառեր` իրավական կանխավարկած, ընդհանուր տեսություն, մեթոդաբանություն, իրավունքի գործիքակազմային տեսություն, իրավական նպատակ, իրավական գործունեություն, իրավական միջոց, նպատակահարմարություն, օգտակարություն և պիտանիություն, նպատակաբանական մեկնաբանություն, մարդկային գործունեություն:

К вопросу о методологии разработки концепции общей теории правовых презумпций

Вирабян Г. М.

Соискатель кафедры теории и истории государства и права ЕГУ
gevorg.virabyan77@gmail.com

Аннотация: С целью разработки концепции общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям в рамках данной статьи автор в юридической доктрине первый раз представил к суду правоведов тезис о том, согласно которому разработку концепций общей теории правовых презумпции (реализация цели) возможна в рамках инструментальной теории права. В частности, в работе предметно обсуждалась инструментальная теория права как методология разработки концепции общей теории: на философском уровне была представлена сущность инструментальной теории, обсужден потенциал инструментальной теории в разработке концепции, и в итоге, представлены выводы, которые станут отправной точкой на пути к созданию общей теории правовых презумпций.

Ключевые слова: правовая презумпция, общая теория, методология, инструментальная теория права, правовая цель, правовая деятельность, правовое средство, целесообразность, полезность и пригодность, телеологическая интерпретация, человеческая деятельность.

On the question of the methodology for developing the concept of the general theory of legal presumptions

Virabyan G. M.

PhD student of YSU Chair of Theory and History of State and Law
gevorg.virabyan77@gmail.com

Abstract: In order to develop the concept of a general theory of integrating sectoral approaches to legal presumptions within the framework of this article, the author in legal doctrine for the first time presented to the court of jurists the thesis that the development of concepts of the general theory of legal presumptions (goal realization) is possible within the framework of the instrumental theory of law. In particular, the work substantively discussed the instrumental theory of law as a methodology for developing the concept of a general theory; at the philosophical level the essence of instrumental theory was presented, the potential of instrumental theory in developing a concept was discussed and as a result conclusion were presented that would become a starting point on the way to creating a general theory.

Key words: legal presumptions, general theory, methodology, instrumental theory of law, legal purpose, legal affairs, legal measure, practicability, utility and availability, teleological interpretation, human activities.

«Պրեզումպցիաների ուսումնասիրության մեթոդաբանական հիմնախնդիրները» վերտառությամբ գիտական հոդվածի շրջանակներում դեռևս 2018 թվականին արձանագրել էինք, որ իրավաբանական դոկտրինում ձեռնարկված ջանքերը չեն ապահովում իրավական կանխավարկածների վերաբերյալ ներդաշնակ իրավական ուսմունքի, համալիր և գործուն տեսության ձևավորման արդյունավետ ու արագ առաջընթացը [5, էջ 8]: Անցել է երկու տարի, սակայն իրավաբանական հանրությունը դարձյալ լռում է «ինչպե՞ս մշակել իրավական

կանխավարկածների ընդհանուր տեսություն» հարցի շուրջ: Այլ կերպ ասած` դոկտրինը չի բարձրաձայնում ընդհանուր տեսության մշակման հիմքում դրվող մեթոդաբանության մասին. առանց մեթոդաբանության, ինչ խոսք, ընդհանուր տեսության մշակումը մնալու է այդպես էլ չիրականացված երազանք:

Սույն հոդվածի շրջանակներում իրավաբանական դոկտրինում առաջ անգամ իրավագետների դատին ենք ներկայացնելու այն թեզը, ըստ որի իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության հայեցակարգի մշակումը

(նպատակի կենսագործումը) հնարավոր է իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում: Հետևաբար, ներքոշարադրյալում մեր խնդիրն է առավել առարկայական քննարկելու իրավունքի գործիքակազմային տեսությունը՝ որպես իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման մեթոդաբանություն: Այս խնդրով պայմանավորված՝ առաջարկում ենք (1) փիլիսոփայական մակարդակում ներկայացնել գործիքակազմային տեսության էությունը, (2) քննարկել գործիքակազմային տեսության ներուժն հայեցակարգի մշակման հարցում, (3) ներկայացնել այն եզրահանգումները, որոնք ելակետային կլինեն այդ նպատակի կենսագործման և խնդիրների լուծման ճանապարհին:

«Ձևավորված ավանդույթի համաձայն», - գրում է Յու.Ս. Ֆիլիպպովան, - «իրավագիտությունը հիմնվում է դեպի ճշմարտություն տանող ճանապարհի առաջընթացն ապահովող, գիտական ապարատի մշակման և այդ ապարատին համապատասխան օրենսդրության կատարելագործման գաղափարների վրա» [34, էջ 24]: Վ. Մ. Սիրիխը, «Իրավաբանական գիտության պատմություն և մեթոդաբանություն» աշխատանքի շրջանակներում խոսելով իրավագիտության գործառույթների մասին, որպես այդպիսիք առանձնացնում է ճանաչողական, տեսական-մեթոդաբանական, կիրառական, գաղափարական և սոցիալ-մշակութային գործառույթները [30, էջ 126]: Ընդ որում ճանաչողական գործառույթի էությունը, ըստ հեղինակի, այն է, որ իրավագիտությունն ուսումնասիրում և հասկացությունների ու կատեգորիաների տեսքով արտահայտում է պետության և իրավունքի անմիջական կեցության կոնկրետ-պատմական ձևերը [30, էջ 126], իսկ կիրառական գործառույթը կենսագործվում է նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման եղանակների մշակման, օրենսդրության համակարգման, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման առաջարկների ձևով [4, էջ 13-14; 30, էջ 133]:

Յու. Ս. Ֆիլիպպովան, ըստ էության չհակադրվելով վերը նշված մոտեցմանը, այնուամենայնիվ ուշադրությունը սևեռում է այն հանգամանքի վրա, որ իրավագիտությունում ճշմարտության որոնումների արժեքը կարող է կասկածելի լինել թեկուզ և այն պատճառով, որ հասկացություններն ու կատեգորիաները, այդ թվում նաև ճշմարտությունը կամ սուտը (կեղծը), որոնք առաջարկվում են գնահատել, հետազոտողների կողմից իրավագիտություն են ներմուծվում դրսից: Հետևաբար, հարց է առաջանում՝ ինչպե՞ս ստուգել այդ դատողությունների ճշմարիտ կամ կեղծ լինելը կամ որ

նույն է՝ ինչի՞ հետ համեմատել: Ստացվում է, որ փաստացի հետազոտության առարկա են դառնում միայն նախորդների կողմից գիտություն ներմուծված կառուցվածքները [35, էջ 57]: Իրավիճակ, որը վերագրելի է իրավական կանխավարկածների շուրջ կատարվող հետազոտություններին:

Պետք է ընդունել, որ այդպիսի հետազոտությունները դժվար թե ունակ կլինեն «որսալու» իրավաբանական հանրության ուշադրությունը, իսկ իրավաստեղծը, իրավակիրառը և իրավաիրացնողը գրեթե ամբողջությամբ անտարբեր կլինեն գիտական այդպիսի որոնումների արդյունքների նկատմամբ: Հետևաբար, եթե իրավական կանխավարկածների հետազոտության պարագայում ցուցաբերենք այն նույն մոտեցումը, ինչ՝ նախորդները, ապա ամենևին էլ չարժե կատարել հետազոտություն. այն չի հարուցելու ոչ գիտնականի և ոչ էլ իրավակիրառի (իրավաիրացնողի) հետաքրքրությունը: Հարկ է նշել, որ այս հանգամանքին առաջարկում էր ուշադրություն դարձնել դեռևս նախորդ հարյուրամյակի խոշոր իրավագետ Գ. Ֆ. Շերշենևիչը [37, էջ 238-240]: Այլ կերպ ասած՝ հեղինակն առաջ է քաշել հետազոտության իրականացման նպատակի գաղափարը:

Որպես իրավաբանական հետազոտության իրականացման նպատակի դասական օրինակ՝ կարող ենք վկայակոչել Օ. Է. Լեյստի կողմից առաջ քաշված այն մոտեցումը, ըստ որի իրավունքի հետազոտության նպատակը «իրավունքի էության բացահայտումն է» [22, էջ 14]: Այսինքն՝ իրավաբանական հետազոտության նպատակը, եթե շարժվում ենք հեղինակի կողմից առաջ քաշված գաղափարով, նույն ինքը՝ հետազոտությունն է: Սակայն այս դեպքում հարց է առաջանում՝ հանուն ինչի՞ վերհանել երևույթի էությունը, ու՞մ է այն անհրաժեշտ, եթե նշված հարցադրումներն ինքնին պարզ չեն:

Իրավական կանխավարկածների ուսումնասիրության ամբողջ խնդիրն այն է, որ չնայած առկա գրականությանը և պարբերաբար կատարվող հետազոտություններին, միևնույն է իրավաբանական միտքը շարունակում է տեղում դուփել. այն նորույթը, որի օբյեկտիվ անհրաժեշտությունն ունի իրավաբանական հանրությունը, բացակայում է:

Այս առումով տեղին է հիշատակել Կ. Տուրի միտքն առ այն, որ իրավագիտությունը սկզբունքային առումով կոչված չէ վերարտադրելու «ճշմարիտ» նկարագրությունը [35, էջ 58]: Ասվածի համատեքստում պետք է փաստել՝ այո՛, նոր մտքի (մտածողության) որոնումն է, որը մշտապես «տանջել է» գիտությանը՝ վերջինիս ի հայտ գալու պահից սկսած և պետք է տանջի նաև ապագայում: Հետևաբար, հարց է առաջանում՝ ո՞րն է գիտության նպատակը, արդյո՞ք կա-

րող ենք պնդել, որ վերջինիս նպատակը ճշմարտությունն է: Եթե այդպես է, ապա արդյո՞ք առկա է ճշմարտություն և եթե առկա է, ապա ո՞րն է ճշմարտության գոյության նպատակն ու անհրաժեշտությունը և ու՞մ համար:

Գաղտնիք չէ, որ փիլիսոփաները, ըստ իրենց ապրած ժամանակաշրջանի, երբևէ չեն թաքցրել այս հարցադրումների նկատմամբ իրենց գիտական հետաքրքրությունները՝ բնականաբար յուրաքանչյուրն ունենալով այդ հարցադրումների պատասխանները ստանալու անհագուրդ ծարավ: Օրինակ՝ Չ.Ս. Պիրսն իր ժամանակին նշում էր, որ սուբյեկտը գործում է ոչ թե իրերով, այլ իր համար կարևորություն ունեցող խորհրդանիշներով: Ըստ գիտնականի՝ ճշմարտությունը վստահության խնդիր է, գիտակցության հատուկ վիճակ, որն իր իսկության վերաբերյալ քննարկումը դարձնում է անարդյունավետ [6, էջ 873-874; 16, էջ 12]: Այդ դեպքում հարց է առաջանում. եթե գիտության նպատակը ճշմարտության որոնումը չէ, ապա ո՞րն է:

Ու. Ջեյմսի կարծիքով ճանաչողությունն ընտրողական կատեգորիա է, այն մշտապես հետապնդում է որոշակի նպատակներ: Արդարությունից ելնելով՝ պետք է նշել, որ հենց Ու. Ջեյմսն է արտահայտել այն միտքը, որ ճշմարտության էությունը մեր նպատակների համար ապագա օգտակարությունն է [1, էջ 287-288; 16, էջ 15]:

Այդ երկու գաղափարների վրա է հիմնվում նաև Դ. Դյուիի այն դատողությունը, ըստ որի գիտության խնդիրն է պլանավորելու ապագան և գտնելու այդ պլանավորման իրականացման միջոցները: «Ճանաչողության խնդիրը, - գրում է հեղինակը, - «աննպատակ է (իմաստագուրկ է)» [10]:

Դ. Դյուին համարվում է փիլիսոփայության մեջ որպես հատուկ ուսմունքի հիմնադիր, որը ստացել է գործիքակազմային մոտեցում [պարադիգմա] անվանումը¹: Դ. Դյուիի հետևորդներից է Ռ. Ռորտին, ում համար նույնպես քննադատության օբյեկտը ճշմարտության բազային հասկացությունն է: Վերջինիս կարծիքով իրականության վերաբերյալ ճշմարտության ձեռքբերման հնարավորության գաղափարը, անկախ հետազոտողից, մոլորություն է: Գիտելիքը պետք է գնահատել ոչ թե ճշմարտության կամ ստի, այլ հասարակության նպատակների կենսագործման համար վերջինիս օգտակարության կամ անօգտակարության տեսանկյունից:

Ռ. Ռորտին բարձրաձայնեց արևմտյան փիլիսոփայության ավանդական հիմնահարցերի մտացածին լինելու, հետևաբար վերջիններիս ուղղությամբ իրականացվող հետազոտություն-

ների գործնական օգտակարության բացակայության մասին²:

Այո՛, պետք է ընդունել, որ այս կամ այն հարցադրման ու վերջինիս վերաբերյալ պատասխանի, հետևության և մտահանգման համար անկյունաքարայինը գործնական օգտակարությունն է, որն ընկած է իմացաբանության հիմքում: Իմացաբանությունը, Ռ. Ռորտիի կարծիքով, պետք է դիտարկել որպես շահերի ապահովման, խնդիրների լուծման ձգտում: Գիտնականի հիմնական նպատակն այնպիսի գործիքների որոնումն է, որոնք թույլ կտան ճաշակելու ավելի շատ բավականություն և ավելի քիչ տառապանք:

Չարգացնելով գործիքակազմության հայեցակարգը՝ Ռ. Ռորտին առանձնացրեց [գործիքի] երկու հիմնական հատկանիշներ: Առաջին, գործիքը պետք է արտացոլի անձանց իրական գործունեության մեջ: «Ինչ գործիք էլ՝ լինի», - գրում է հեղինակը, - «այն միջավայրի հետ միասին օրգանիզմի փոխազդեցության մաս պետք է կազմի» [7]: Երկրորդ, խնդիրների լուծման համար գործիքի պիտանիությունը: Վերլուծելով երևույթը՝ հիմնական հարցը, որին պետք է պատասխանել՝ արդյո՞ք այն ունակ է լուծելու որոշակի խնդիրներ [7]:

Անդրադառնալով այն հարցին՝ արդյո՞ք գործիքի օգտակարությունը և պիտանիությունը պետք է անհանգստացնի որևէ մեկին այն տեսանկյունից՝ վերջինս կարողանում է ճշտորեն արտահայտել իրականությունը, թե՛ ոչ, մտածողի (փիլիսոփայի) հիմնական դատողությունը հանգում է հետևյալին. «Մենք չենք կարող հաշվի չնստել ճանաչողության նպատակի ճշմարտության հարցի հետ» [7]: Այլ խոսքով ասած՝ ճանաչողության խնդիրն է հասնել մարդկանց միջև համաձայնության այն նպատակների և միջոցների շուրջ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի կենսագործելու այդ նույն նպատակները: Այսինքն՝ այստեղ խոսքը վերաբերում է նրան, որ ճանաչողության տեսանկյունից արժևորման ենթակա է ոչ թե ցանկացած միջոց, որը հասարակության մեկ անդամին կամ որոշակի խմբին հնարավորություն է տալիս իրագործելու իր նպատակները, այլ այնպիսի միջոց, որի շուրջ արդարացի պահանջմունքի և նպատակի ճշմարտացիության առումով առկա է հասարակական կոնսենսուս կամ որ նույն է՝ ընդունելի է հասարակության համար:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ.

¹ Դ. Դյուիի գաղափարների մասի տե՛ս [2, էջ 306-307; 3, էջ 185-186]:

² Ռ. Ռորտիի հայացքները պաշտպանվում են նաև մի շարք այլ փիլիսոփաների կողմից: Օրինակ՝ Խ. Պատոնեմը 20-րդ դարի 70-ականներին և 80-ականների սկզբներին արտահայտեց ճշմարտության հասնելու նպատակը ռացիոնալության կամ պիտանիության հասնելու նպատակով փոխարինելու գաղափարը [25, էջ 76-82]:

► փիլիսոփայության մեջ գործիքակազմության հիմնական հայեցակարգը հետևյալն է՝

- պետք չէ գիտելիք հանուն ճշմարտության կամ հանուն գիտելիքի. օգտակարությունն է նոր գիտելիքի չափանիշը.

- գիտության կողմից մշակված միջոցները պետք է մատչելի լինեն հասարակության կողմից որոշակի նպատակների հասնելու համար.

- գիտության կողմից առաջարկվող գործիքները պետք է սերտ կապի մեջ գտնվեն իրականության (երևույթների, առարկաների) և սուբյեկտի հետ. գործիքը կենսագործվում է վարքագծի միջոցով, իսկ վարքագծի կամ երևույթի ինչպիսին լինելը պարզվում է այդ նույն գործիքով.

- գիտական գիտելիքը սուբյեկտին պետք է ծառայի որպես կողմնորոշիչ՝ վերածվելով վերջինիս տարատեսակ շահերի բավարարման ինքնատիպ միջոցի.

► գործիքակազմային մոտեցումն օգտակարությունը գնահատում է՝ այն համադրելով գիտության կողմից հասարակության նպատակների կենսագործման և պահանջմունքների բավարարման համար առաջարկվող լուծումների հետ [34, էջ 26]:

Այժմ վերադառնանք իրավական կանխավարկածներին: Մասնավորապես, վերոշարադրյալից դժվար չէ նկատել, թե որն է, ի համեմատություն նախորդների, իրավական կանխավարկածների հետազոտության նպատակի մեր այլ կերպ ընկալումը (տեսականը): Համեմատությունն ավելի տեսանելի դարձնելու նպատակով բերենք մեկ օրինակ:

Վ. Մ. Միրիխը, խոսելով իրավագիտության կիրառական գործառնության մասին, նշում է, որ վերջինս կոնկրետ հարաբերություններում իրականացնում է օրենսդրության կենսագործման մոնիտորինգ և պատրաստում է այս կամ այն իրավական նորմի արդյունավետությանը խոչընդոտող գործոնների վերացման միջոցների վերաբերյալ առաջարկություններ [30, էջ 134]:

Ինչպես նկատում ենք, ավանդական հայեցակարգում մարդը, փաստորեն, իր վարքագծով խոչընդոտում է օրենսդրության կենսագործմանը և կարծես՝ այդ իրացումն ինքնին ունի իր սեփական արժեքը, կարծես՝ մարդն է օրենսդրության համար, այլ ոչ թե՝ հակառակը: Մինչդեռ գաղափարը պետք լինի հետևյալը՝ «ubi societas, ubi jus»³: Մրանում է նաև, ըստ էության, իրավական կանխավարկածների հետազոտության հայեցակարգի բացակայության հիմնական խնդիրը:

Տևական ժամանակ իրավական կանխավարկածների շուրջ իրավաբանական դոկտրին-

նում գերակշռում է այն մոտեցումը, համաձայն որի վերջինիս պետք է վերագրվի պատճառական կապ, իսկ գիտական բացատրությունը պետք է ցույց տա պատճառների շարունակական շարքը, որն անխուսափելիորեն կհանգեցնի հետևանքի [27, էջ 17]: Խնդիրն այն է, որ իրավական կանխավարկածների դեպքում պատճառահետևանքային մոտեցումը, արտարկվելով բնագիտական բացատրությունից, ամբողջությամբ հեռացնում է ինչպես սուբյեկտին, այնպես էլ վերջինիս կամքին: Իհարկե, մենք չենք ժխտում այն իրողությունը, որ օբյեկտիվ որոշակիության ու պատճառականության գաղափարի վրա հիմնվում է նաև իրավագիտությունը, և որում դիտարկվում է իրավունքի՝ որպես անխուսափելի օբյեկտիվ գործընթացի գործողությունը [13, էջ 180]:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ գիտության շրջանակներում մարդու վերաբերյալ դետերմինիզմը փոխարինվում է իմացաբանության վրա հիմնված դետերմինիզմով [11, էջ 188; 40]: Այսինքն՝ իրավական կանխավարկածի վերհանումը պահանջում է նպատակաբանական պարզաբանում՝ որպես վերջինիս (կանխավարկածի) գոյության գիտական բացատրության հիմք: Ընդ որում իրավունքում իրավական կանխավարկածների էության բացահայտման այս մոդելի գաղափարն այն է, որ վերջինս իր մեջ ներառում է ինչպես նպատակը, այնպես էլ նախադրյալը և հանգում է հետևյալին.

► նախադրյալ, որում ձևավորվում է իրավական կանխավարկածի գոյության նպատակի բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածի էությունը, նրա «ինչ» և «ինչպիսին» լինելը վեր է հանվում նպատակի բովանդակության միջոցով: Այստեղ խոսքը, ըստ էության, վերաբերում է իրավական սկզբունքի՝ որպես օրինաչափության և կանխավարկածի՝ որպես այդ օրինաչափության կենսագործման միջոցի հարաբերակցությանը.

► նպատակին հասնելու միջոցը վկայակոչող պայման. խոսքը մի կողմից իրավաբանական փաստի և կանխավարկածի, մյուս կողմից կանխավարկածի և իրավանորմի հարաբերակցության մասին է.

► նպատակին հասնելու համար ընտրված միջոցի (կանխավարկածի) կիրառման արդյունքում կատարված դատողությունը/մտահանգումը⁴:

Այս մոդելի կիրառումը մեզ հնարավորություն կընձեռի հաղթահարելու իրավաբանական դոկտրինում իրավական կանխավարկածների շուրջ առկա խնդիրները: Օրինակ՝ վերջինիս շրջանակներում ունակ կլինենք բացահայտելու

³ «Որտեղ հասարակությունն է, այնտեղ և օրենքն է» [9, էջ 18]:

⁴ Այս մոդելի մասին ավելի մանրամասն տե՛ս օրինակ [20, էջ 342]

կանխավարկածի էությունը (արդյունքում կունենանք միասնական ընդհանուր հասկացություն), քննարկելու իրավական սկզբունքի և իրավական կանխավարկածի հարաբերակցությունը, իրավունքում փաստացի կանխավարկածների գոյության հարցը, իրավական կանխավարկածի ու իրավանորմի հարաբերակցությունը: Ավելին, նպատակաբանական բացատրությունն է, որ առավել ամբողջական կերպով հաշվի կառնի մարդու դերը և վերջինիս կամքն իրավական կանխավարկածների գոյության պարզաբանման մեջ⁵:

Դժվար չէ նկատել, որ իրավական կանխավարկածների հետազոտության ընդհանուր տեսության հայեցակարգի ստեղծման համար իրավունքի գործիքակազմային տեսությունը՝ որպես մեթոդաբանական հայեցակարգ, առավել քան հեռանկարային է: Ինչպես նշում է Բ.Ի. Պուգինսկին, գործիքակազմային ուսմունքը փիլիսոփայական և մեթոդաբանական առումով հիմնավորված է և արգասաբեր [28, էջ 24]: Մասնավորապես, ընդհանուր տեսության հայեցակարգի ստեղծման հարցում գործիքակազմության արժեքաբանությունն այն է, որ ի վերջո կառաջարկի հրաժարվել իրավական կանխավարկածների շուրջ անպտուղ վեճերից: Փոխարենը նպատակի շուրջ համաձայնության գալու նկատառումից ելնելով՝ հնարավորության կտա ավարտին հասցնելու փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների միջև շուրջ 60 տարի շարունակվող «գիտական պատերազմը»:

Եթե մի փոքր հեռուն նայենք, ապա կարող ենք արձանագրել, որ գործիքակազմային տեսությունը կապահովի նաև նոր ստեղծվողի ճկունությունն այն առումով, որ կառաջադրի ոչ միայն նպատակների կենսագործման համար առկա խնդիրների լուծումներ, այլ նաև կարող է տարբեր իրավիճակներում տարբեր կերպ արժևորել և գնահատել այդ լուծումներին ուղղված միջոցները: Խնդիրն այն է, որ այն ամենը, ինչն այսօր նպատակին հասնելու միջոց է, կարող է վաղն ամբողջությամբ դադարել այդպիսին լինելուց. նպատակի անհրաժեշտությունը վերացել է:

Իրավունքի գործիքակազմային տեսության հաջորդ դերակատարությունն այն կլինի, որ հնարավորություն կընձեռի իրավական կանխավարկածը դիտարկելու նաև նպատակին հասնելու ճանապարհին սուբյեկտի կողմից դրսևորած վարքագծի ընկալման (մեկնա-

բանման) մեթոդ: Խոսքը վերաբերում է նրան, որ գործիքակազմային տեսությունն է այն մեթոդաբանությունը, որը թույլ է տալիս գնահատելու այս կամ այն իրավիճակում սուբյեկտի կողմից այս կամ այն միջոցի կիրառման ժամանակ դրսևորած նախաձեռնության ինչպիսին լինելը՝ ելնելով այն նկատառումից, որ վերջինս հիմնված է մարդկային ընտրության, սեփական գործունեության մեջ լուծումների ներդրման գնահատականի վրա: Ցավոք, այս հանգամանքը մինչ օրս հաշվի չի առնվել անգամ այն իրավագետների կողմից, ովքեր ևս բարձրաձայնում են իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման գաղափարի մասին:

Խնդիրն այն է, որ կանխավարկածների դեպքում ևս պետք է առաջնորդվել այն գաղափարով, որ մարդու կամքից, գիտակցությունից, ազատ ընտրությունից և վարքից է կախված վերջինիս և իրավունքի իրացումը: Իսկ կանխավարկածն այդ առումով որպես իրավական սկզբունքի կենսագործումն ապահովող միջոց՝ կոչված է որոշ դեպքերում պատասխանելու այն հարցին, թե ո՞րն է եղել մարդու կամքը, կամ ինչպիսին է եղել նրա գիտակցությունը սովյալ իրավիճակում:

Վերցնենք օրինակ՝ «անձը կարող է կատարել այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքներն ու օրինակ շահերը»: Սա, անշուշտ, սկզբունք է: Այս սկզբունքի կենսագործումն ապահովվում է «մարդը բարեվարք է» (բարեվարքության) կանխավարկածի միջոցով: Այսինքն՝ ընդհանուր կանոնի համաձայն յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում մեկնարկն սկսում ենք այն կետից, որ անձի կատարած գործողությունը կամ անգործությունը չի հանգեցնում մյուսի իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Այլ խոսքով ասած, եթե նույնիսկ առաջնորդվում ենք նպատակի և միջոցի պիտանի ու օգտակար լինելու ճանապարհով, մինևույն է ճանապարհի ուղեկիցն այն տեսլականն է, ըստ որի իրավունքը գոյություն ունի հանուն մարդու և միայն մարդն է բանականության կրողը, հետևաբար իրավունքի ու իրավական կանխավարկածի կենսագործողը⁶:

Իրավական կանխավարկածների շուրջ կատարվող հետազոտություններում մարդը, վերջինիս պահանջումները, նպատակները և կամքը շարունակվում են դուրս գտնվել հետազոտությունների շրջանակներից, իսկ իրավունքը, հատկապես ճյուղային գիտական աշխատանքներում, ներկայացվում է որպես ինչ-

⁵ Հարկ է նշել, որ գործիքակազմային մոտեցումը կիրառվում է սոցիալական կյանքի տարատեսակ երևույթներ ուսումնասիրելիս: Օրինակ՝ Ն. Մաքիավելլին այն կիրառում էր քաղաքական կոնֆլիկտը և իշխանությունն ուսումնասիրելիս՝ քաղաքականությունը դիտարկելով որպես միջոց, որպես իշխանությունը գրավելու և պահելու տեխնոլոգիա: Տե՛ս [23, էջ 53]:

⁶ Հարկ է նշել, որ այս առումով Ֆ.Վ. Փոն Մավինին գտնում էր, որ «իրավունքը» գոյություն ունի հանուն բարոյականության, որը բնորոշ է ցանկացած անհատի: Այդ մասին տե՛ս [29, էջ 6]:

որ հաստատուն մեծություն [35, էջ 64]: Դա, ըստ էության, դոգմատիկ իրավագիտությունում հասկացություններով ուղղորդվելուն սովորած լինելու հետևանք է, որը ձևավորված է ժամանակակից իրավագետների շրջանում: Հետևաբար, ուզենք, թե՛ ոչ, պետք է համակարծիք լինել Մաքս Պլանկի այն մտքի հետ, ըստ որի նոր գիտական ճշմարտությունը հաղթության ճանապարհ է բացում ոչ թե համոզելով հակառակորդներին և ստիպելով նրանց աշխարհը տեսնել նոր լույսի ներքո, այլ այն պատճառով, որ վերջինիս հակառակորդները վաղ թե ուշ մահանում են և նոր սերունդ է մեծանում, ով ընտելացել է նորին [26, էջ 649-663]:

Եթե նպատակի ու միջոցի և մարդկային գործունեության միջև կապը կբացակայի, ապա իրավունքը, այդ թվում նաև իրավական կանխավարկածը կընկալվեն միայն որպես օբյեկտիվորեն տրված համակարգեր: Մինչդեռ այդ համակարգերի ընկալման համար անհրաժեշտ է գործունեություն, ընդ որում՝ մարդկային. միայն այդպիսի գործունեությունն է, որն օժտված է բանականությամբ: Այլ խոսքով ասած՝ մարդկային գործունեությունից կորսված պայմաններում իրավական կանխավարկածների ուսումնասիրությունն «ամորձատում» է այդպիսի հետազոտության իրականացման ինչպես անհրաժեշտությունը, այնպես էլ՝ էվրիստիկ ներուժը⁷:

Իրավական կանխավարկածների շուրջ կատարված հետազոտությունները վկայում են այն մասին, որ օրինակ՝ Վ.Կ. Բաբանի կողմից դեռևս նախորդ դարի 60-ական թվականներին առաջ քաշված իրավական կանխավարկածի հասկացությունը փիլիսոփայական մոտեցման հետևորդները հարստացնում են ընդամենը «նոր» կամ «նորաձև» բառերով: Մինչդեռ իրավագիտությունը և որպես հետևանք՝ իրավական կանխավարկածներն այդ ամենի արդյունքում չեն արդիականացվում. Վերջիններիս հաղորդվում է ընդամենը որոշակի փայլ: Այդ ամենը հանգեցնում է նրան, որ օրինակ՝ փիլիսոփայական մոտեցումը՝ որպես մեթոդաբանություն, այլևս «չի աշխատում» և դիտարկվող երևույթին չի հաղորդում որևէ նոր հատկանիշներ:

Ասվածն առավել վառ կերպով արտահայտվում է օրինակ՝ Լ.Մ. Աստեմիրովայի, Ե.Ա. Ուգրենինովայի, Ն.Ս. Կարանինայի աշխատություններում և ոչ միայն: Բնական է, որ երեք

հեղինակներն էլ ընտրել են ուսումնասիրության իրականացման տարբեր մեթոդներ: Մակայն վերջնարդյունքում ստացել են այն ամենը, ինչ՝ նախորդները. տարբերությունն ընտրված բառերի մեջ է: Օրինակ՝ հեղինակներից մեկը նշում է, որ իրավական կանխավարկածը ենթադրություն է [17, էջ 11], մյուսը՝ իրավական կանխավարկածը հավանական դատողություն է [8, էջ 9], երրորդն էլ այն կարծիքին է, որ կանխավարկածը հիմնավորված իրավաբանական նշանակություն ունեցող ենթադրություն է [31, էջ 9]:

Այստեղ խնդիրն ամենևին էլ այն չէ, որ հեղինակները հանգել է այդպիսի հետևությունների: Իսնդիրն այն է, որ ընտրված մեթոդները գործել են ապարդյուն. առանց կանխավարկածի էությունը վերահանելու՝ հետազոտողը չէր կարող այս կամ այն մեթոդի օգնությամբ հասնել դրական արդյունքի: Իրավական կանխավարկածների դեպքում հետազոտության տարբեր մեթոդների կիրառումը պետք է հանգեցնեք տարբեր արդյունքների՝ ցույց տալով ուսումնասիրվող երևույթի (կանխավարկածի) զանազան կողմերը: Մինչդեռ այն տեղի չի ունեցել, որը, անշուշտ, մտածելու տեղիք է տալիս. այդ մեթոդներն ի վիճակի չեն լուծելու առկա խնդիրները:

Իսնդրի էությունն առավել պարզ ներկայացնելու նկատառումից ելնելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամենևին էլ չենք ցանկանում ստեղծել տպավորություն, որ պատեհ կամ անպատեհ փորձում ենք քննադատել նախորդներին՝ բերենք կոնկրետ օրինակ՝ ընդ որում իրավագիտությունից դուրս:

Օրինակ, եթե երկայթն ուսումնասիրվում է կշռման եղանակով, ապա արդյունքը կլինի կլիոգրամով որոշվող քաշը, եթե չափվում է ջրով տարայի մեջ ընկղմելու եղանակով՝ ծավալը կստացվի խորանարդ սանտիմետրերով, իսկ եթե քիմիական վերլուծություն իրականացվի, ապա երկայթի մեջ կբացահայտվեն տարբեր նյութեր պարունակող տարրեր: Եթե տարբեր մեթոդների կիրառմամբ կստացվի նույնական արդյունք, նշանակում է՝ այդ մեթոդները առարկան հետազոտել են, ըստ էության, միանման հնարքներով:

Ասվածն իրավական կանխավարկածների շրջանակներում տեղայնացնելու դեպքում կարող ենք փաստել, որ վերը նշված հեղինակներից յուրաքանչյուրի առաջ քաշածը համընկել է մյուսների կողմից այլ եղանակով ստացված արդյունքների հետ: Այսինքն՝ ստացվում է, որ հետազոտողներից յուրաքանչյուրի կողմից իր հետազոտության նկատմամբ կիրառված եղանակը չի տարբերվել մյուսներից, հետևաբար որևէ նորույթ ձեռք չի բերել: Նշանակում է՝ պետք է խորհել՝ ո՞րն է

⁷ Այստեղ կամա, թե ակամա բախվում ենք Է.Գ. Յուդինի կողմից նկարագրված այն հիմնահարցի հետ, ըստ որի ցանկացած մեթոդաբանություն անգործ է, երբ վերջինիս բովանդակությունը միայն արտաքինապես է ձևավորում, որն ավելի վաղ կառուցվել է մեկ այլ մեթոդաբանության հիման վրա: Տե՛ս [39, էջ 85]:

թերությունը տվյալ մեթոդում կամ վերջինիս ոչ ճիշտ կիրառման մեջ:

Իրավունքի գործիքակազմային տեսությունը՝ որպես մեթոդաբանական ուղի, հնարավորություն կընձեռի ազատվել նաև վերացարկված արդյունավետությունների մասին խոսելուց: Խնդիրն այն է, որ առհասարակ հետազոտողները, մի կողմ թողնելով այն իրողությունը, որ անձից դուրս և առանց անձի պահանջումըներն ընկալելու չի կարող լինել նպատակահարմարություն, օգտակարություն, այնուամենայնիվ առաջարկում են վերացարկումների այնպիսի տիպեր, ինչպիսիք են օրինակ՝ իրավունքի, իրավանորմի կամ օրենքի արդյունավետությունը [38, էջ 23], [], [14, էջ 191-196; 15, էջ 48; 19, էջ 109; 21, էջ 23-24; 32, էջ 318; 33, էջ 19-20], որոնք ինքնին պատրանք են:

Այս պատկերը վերագրելի է նաև իրավական կախավարկածներին: Արդարությունից ելնելով պետք է արձանագրել, որ թերևս միայն Մ.Պ. Պրոնինան է, խոսելով իրավական կանխավարկածների արդյունավետության մասին, նշում, որ այն ընդհանրապես արդյունավետության և մասնավորապես իրավանորմի արդյունավետության տարատեսակ է [27, էջ 99-122]՝ արդյունավետության որոշման չափանիշներ առաջարկելով նպատակը, միջոցն ու արդյունքը [27, էջ 8-9]: Սակայն հեղինակը չի անդրադառնում այն խնդրին, որ մարդկային գործունեությունից կտրված նպատակը կամ միջոցը չեն կարող լինել արդյունավետ:

Ինչ խոսք, մենք նույնպես ամբողջովին ինքնատիպ լինել չենք կարող. այն ժամանակ է պահանջում: Այնուամենայնիվ նշված հարցի դիտարկման հետ կապված անհրաժեշտ է մեջ բերել Ջ. Դյուլիի այն պարզ և ակնհայտ միտքը, ըստ որի նպատակ ունենում են մարդիկ, այլ ոչ թե վերացարկված հասկացությունները»: <Ետևաբար, իրավական կանխավարկածների ուսումնասիրության ժամանակ մարդկային գործունեությունից կտրված ցանկացած մեթոդաբանական մոտեցում «դատապարտված» է անհաջողության՝ այդ թվում նաև վերջիններիս արդյունավետության հետ կապված հարցեր քննարկելիս:

Մեր պատկերացմամբ իրավական կանխավարկածների հետազոտությունը պետք է իրականացնել նպատակաբանության, իրավական իրականության մեջ կիրառման գործառույթային օգտակարության տեսանկյունից, որը կոչված կլինի ապահովելու իրավական նպատակի կենսագործումը: Այս կամ այն կանխավարկածի գոյության չափորոշիչը վերջինիս գոյության օգտակարությունն է անձի համար⁸:

Այլ խոսքով ասած՝ իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առավել հանգամանորեն կուսումնասիրվեն միմյանց հետ սերտորեն կապված երեք կատեգորիաներ՝ «իրավական նպատակ», «իրավական միջոց» և «իրավական գործունեություն»:

Գործիքակազմային տեսությունը մեզ թույլ կտա նաև իրավական կանխավարկածների դեպքում՝ ելնելով իրավունքի օգտապաշտությունից՝ միավորել դոգմատիզմը, սոցիոլոգիան և փիլիսոփայությունը՝ դրանող հաղթահարելով երկու, այն է՝ իրավաբանական և փիլիսոփայական մոտեցումների միջև առկա հակասությունները: Օրինակ՝ իրավաբանական դոգմատիզմում իրավական կանխավարկածների համար գործիքակազմային տեսության անհրաժեշտությունն այն է, որ վերջինս հնարավորություն կընձեռի որոշ դեպքերում իրավանորմի կամ իրավադրույթի նպատակաբանական հիմք դիտարկել նաև կանխավարկածը՝ որպես այդ նպատակի արդեն իսկ կրող: Այսինքն՝ իրավանորմի իմաստի վերաբերյալ դատողություններում որոշ դեպքերում պետք է առաջին հերթին տեսնել ոչ թե տառացի տեքստը, այլ նրանում դրված խնդիրները և լուծման ճանապարհները [18, էջ 10-11]: Այլ խոսքով ասած՝ իրավական կանխավարկածների հետազոտության դեպքում նպատակաբանական մեկնաբանումը պետք է լինի առաջնայինը՝ որպես ինչպես իրավական կանխավարկածի, այնպես էլ իրավանորմի կամ սուբյեկտի վարքագծի իմաստի վերհանման միջոց⁹:

Այսպիսով, անդրադառնալով այն հարցին՝ «ի՞նչ պետք է իրենից ներկայացնի իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը» և «ինչպե՞ս պետք է այդ հայեցակարգը մշակել»՝ կարող ենք արձանագրել, որ հիմնվելով իրավունքի գործիքակազմային տեսության վրա՝ պետք է ստեղծել այնպիսի հայեցակարգ, որը կլինի (1) նպատակների (փիլիսոփայական մաս), (2) իրավական նորմերի (դոգմատիկ մաս) և (3) իրավական միջոցների ձևավորման և կիրառման գործում (սոցիոլոգի-

⁸ Այս առումով հարկ է նշել, որ օգտակարության չափանիշը, նախքան իրավագիտությունում գործիքակազմային տեսու-

թյան ի հայտ գալը, դեռևս 19-րդ դարում ձևակերպվել է Մ.Մ. Սպերանսկիի կողմից հետևյալ բանաձևով. «Օրենքը պետք է օգտակար լինի անձին»: Այդ մասին տե՛ս [36, էջ 5-26]

⁹ Այս առումով հատկանշական է օրինակ՝ Ֆինլանդիայի փորձը: Գիտնականների համոզմամբ՝ իրավաբանական դոգմատիկայում կենտրոնականը, որն ուղղված է իրավական հարցերի լուծմանը, վերջինիս գործնական ասպեկտն է՝ իրավական մեկնաբանությունը, որը պետք է առաջին հերթին ծառայի իրավական նպատակներին: Այդ մասին տե՛ս օրինակ [24, էջ 46].

ական մաս) սուբյեկտների իրավական գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների համադրություն, որոնց հիմնական որակական բնութագրերն իրավաստեղծ, իրավակիրառ և իրավաիրացնող գործունեության մեջ սուբյեկտների կողմից իրավունքի հիմքում դրված նպատակներին հասնելու պիտանիությունն ու օգտակարությունն է:

Գիտակցելով իրավական կանխավարկածների շուրջ իրավաբանական դոկտրինում առկա բազմակարծությունը, առավել ևս մեկ մոտեցման ձգտման շուրջ սկզբունքային տարբերությունները՝ մենք առաջնորդվում ենք այն տեսլականով, որ եթե կարողանանք միավորել իրավագիտության դոգմատիկ, սոցիալ-գիական և փիլիսոփայական մասերը՝ էպիկենտրոնում պահելով մարդու պահանջմունքը, արդյունքում ստանալու ենք գործիքակազմ, որը թույլ է տալու իրավական կանխավարկածների շուրջ աստիճանաբար ձևավորել մեկ մոտեցում: Հակառակ դեպքում, եթե միևնույն երևույթին մոտենանք այլ կամ միմյանց հակադրվող պրիզմաներով, արդյունքն այլ է լինելու:

Իսնդիրն այն է, որ սուբյեկտների մոտ իրավական կանխավարկածի կիրառման կարիքը բոլոր դեպքերում առկա է, երբ վերջիններիս առջև վեր են խոյանում խնդիրներ և իրավական նպատակներ: Իրավունքը, միևնույն է, նույնիսկ իր առանձնահատուկ ուժի հաշվին ի վիճակի չէ միայնակ գործելու և բավարարելու սուբյեկտների պահանջմունքները: Իրավունքի կողմից տրված հնարավորությունների կենսագործման համար անհրաժեշտ են միջոցներ: Ահա այս առումով իր յուրօրինակ դերով առանձնանում է նաև իրավական կանխավարկածը՝ որպես իրավական միջոց: Սուբյեկտի գործունեության շրջանակներում իրավական միջոցի (կանխավարկածի) ամբողջությունն էլ կազմում է վերջինիս իրավական գործիքակազմը. Իրավական կանխավարկածի ընտրության անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ սուբյեկտի մոտ առկա է պահանջմունք: Հետևաբար, աննպատակ միջոցը չի կարող գոյություն ունենալ պարզապես «իրավական միջոց» հասկացության հաշվին:

Այս ամենով պայմանավորված՝ մեր խնդիրն էր պատկերել իրավունքի գործիքակազմային տեսության էությունը: Էություն վերհանման հիմնական նպատակն այն էր, որպեսզի կարողանայինք հասկանալ՝ որոնք են իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի նախադրյալները: Մեղանը մաքրելով կարող ենք փաստել, որ եթե ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման հիմնահարցը քննարկում ենք իրավունքի գործիքակազմային տեսության շրջանակներում, ապա

վերջինս, ի համեմատություն մյուսների, գոյաբանության, իմացաբանության և տրամաբանության միասնությանը հնարավորություն է տալիս փիլիսոփայական-իմացաբանական գործընթացում հանդես գալ որպես մեթոդաբանական առանցք՝ գործելով որպես օբյեկտիվության՝ սուբյեկտիվ ընկալման միջոց՝ իր հերթին վերափոխվելով երկրորդ օբյեկտիվության:

Եզրահանգում: Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ ստորև կարող ենք արձանագրել հետևյալի մասին:

➤ Իրավունքի գործիքակազմային տեսությունը հնարավորություն կընձեռի իրավական կանխավարկածի էությունը վերհանել նպատակաբանական տեսանկյունից՝ որպես վերջինիս (կանխավարկածի) գոյության գիտական բացատրության հիմք: Գաղափարն այն է, որ իրավական կանխավարկածի էության բացահայտման այս ձևն իր մեջ ներառում է ինչպես նպատակը, այնպես էլ նախադրյալը և հանգում է հետևյալին.

- նախադրյալ, որում ձևավորվում է իրավական կանխավարկածի գոյության նպատակի բովանդակությունը: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածի էությունը, նրա «ինչ» և «ինչպիսին» լինելը վեր է հանվում նպատակի բովանդակության միջոցով: Այստեղ խոսքը վերաբերում է իրավական սկզբունքի՝ որպես օրինաչափության և կանխավարկածի՝ որպես այդ օրինաչափության կենսագործման միջոցի հարաբերակցությանը.

- նպատակին հասնելու միջոցը վկայակոչող պայման. խոսքը մի կողմից իրավաբանական փաստի և կանխավարկածի, մյուս կողմից կանխավարկածի և իրավանորմերի հարաբերակցության մասին է.

- նպատակին հասնելու համար ընտրված միջոցի (կանխավարկածի) կիրառման արդյունքում կատարված դատողությունը (մտահանգումը):

➤ Պատասխանելով այն հարցին, թե «ի՞նչ պետք է իրենից ներկայացնի իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը» և «ինչպե՞ս պետք է այդ հայեցակարգը մշակել»՝ արձանագրեցինք, որ հիմնվելով իրավունքի գործիքակազմային տեսություն վրա՝ պետք է ստեղծել այնպիսի հայեցակարգ, որը կլինի (1) նպատակների (փիլիսոփայական մաս), (2) իրավական նորմերի (դոգմատիկ մաս) և (3) իրավական միջոցների ձևավորման և կիրառման գործում (սոցիոլոգիական մաս) սուբյեկտների իրավական գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների համադրություն, որոնց հիմնական որակական բնութագրերն

իրավաստեղծ, իրավակիրառ և իրավաիրացնող գործունեության մեջ սուբյեկտների կողմից իրավունքի հիմքում դրված նպատակներին հասնելու պիտանիությունն ու օգտակարությունն է:

➤ Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգի մշակումը հնարավոր այն դեպքում, երբ առավել հանգամանորեն կուսումնասիրվեն միմյանց հետ սերտորեն կապված երեք կատեգորիաներ՝ «իրավական նպատակ», «իրավական միջոց» և «իրավական գործունեություն»:

➤ Հայեցակարգը կհամարվի ստեղծված, եթե վերջինիս բովանդակությունը կկազմեն էմպիրիկ և տեսական մակարդակների վրա հիմնված հետազոտվող օբյեկտի և առարկայի մասին գիտելիքները՝ հաշվի առնելով մարդկային գործունեությունը, այդ մակարդակների վրա հիմնված գիտելիքները կլինեն հնարավորինս ամբողջական, կձառայեն որպես նոր գիտելիքների ձեռքբերման միջոց, նոր գիտելիքներն էլ իրենց հերթին կառաջարկեն առավել արդյունավետ եղանակներ, որոնք մի կողմից հնարավորություն կընձեռեն վերհանելու նոր կանխավարկածների առաջացման և կիրառման պայմանները, հետևաբար նաև վերջիններիս բնորոշ հատկանիշները, իսկ մյուս կողմից էլ՝ վերջիններիս գոյության օբյեկտիվ գործոնները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Չաքարյան Ս. Ա.**, Փիլիսոփայության պատմություն: Եր.: Նաիրի հրատ., 2000:
2. **Չաքարյան Ս. Ա.**, Փիլիսոփայության պատմություն: Ուս. ձեռնարկ, երկրորդ հրատ.: Եր.: Նոյան Տապան հրատ., 2007:
3. **Հակոբյան Ս. Մ.**, Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուս. ձեռնարկ: Եր.: Հեղինակային հրատ., 2009:
4. **Վաղարշյան Ա. Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ: Եր.: Հեղինակային հրատ., 2016:
5. **Վիրաբյան Գ. Մ.**, Պրեզումպցիաների ուսումնասիրության մեթոդաբանական հիմնախնդիրները / ԵՊՀ իրավ. ֆակուլ. Ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու: Գլխ. խմբ. Գ. Ս. Դազինյան: Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 2(2) 2018:
6. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ: Ուս. ձեռնարկ: Ռուս. թարգմ. Հ.Ղ. Միրզոյան, Թ.Վ. Դիվանյան, Եր.: ԵՊՀ հրատ., 1979:
7. **Андреева И. С.**, Философский прагматизм Ричарда Рорти и российский контекст. 1997 (<https://cyberleninka.ru>, վերջին մուտքը՝ 21.09.2020թ., ժամը՝ 18:35):
8. **Астемирова Л. А.**, Презумпции в российском праве. дисс. канд. юрид. наук. Москва, 2010:
9. **Бержель Ж.-Л.**, Общая теория права / Под. общ. ред. В. И. Даниленко / Пер. с фр. М.: Изд. Издательский дом NOTA BENE, 2000:
10. **Блинников Л. В.**, Краткий словарь философских персоналий. (<http://www.godon.org>, վերջին մուտքը՝ 21.09.2020թ., ժամը՝ 18:27):
11. **Вригт фон Г. Х.**, Логико-философское исследование. Избранные труды. М.: Изд. Прогресс, 1986:
12. **Вышегородцева О. В.**, Ричард Рорти. Вводная статья // Философия науки. Эпистемология. Методология. Культура: Хрестоматия / Отв. ред. сост. Л.А. Микешина. Науч. ред. Т.Г. Щедрина. М.: Изд. Издательский дом Международного университета в Москве, 2006:
13. **Гойман В. И.**, Действие права (Методологический анализ). М.: Изд. Академия МВД РФ, 1992:
14. **Жинкин С. А.**, Некоторые аспекты понятия эффективности норм права // Известия вузов. Правоведение. 2004, № 61:
15. **Жинкин С. А.**, Определение понятия эффективности норм права: некоторые аспекты проблемы // Научные труды РАЮН. 2004, № 4 Т. 1:
16. **Казначеев П. Ф.**, Философия неопрагматизма и теория свободы в современном либерализме: дисс. канд. филос. наук. Москва, 2002:
17. **Каранина Н. С.**, Правовые презумпции в теории права и российском законодательстве: дисс. канд. юрид. наук. Москва, 2006:
18. **Карапետов А. Г.**, Борьба за признание судебного правотворчества в европейском и американском праве. М.: Изд. Статут, 2011:
19. **Козлов В. А.**, К вопросу о понятии эффективности права // Вестник ЛГУ. 1972, № 5:
20. **Кохановский В. П. и др.**, Философия науки вопросах и ответах: учебное пособие для аспирантов и соискателей. Ростов: Изд. Феникс, 2006:
21. **Кудрявцев В. К., Никитинский В. И., Самогценко И. С., Глазырии В. В.** Эффективность правовых норм. М.: Изд. Юридическая литература, 1980:
22. **Лейст О.Э.**, Сущность права. Проблемы теории и философии права: учебное пособие для студентов вузов. М.: Изд. Зерцало-М, 2011:
23. **Макиавелли Н.**, Государь. М.: Изд. Планета, 1990:
24. **Орлов В. Г.**, Правовая догматика в скандинавском праве // Российский ежегодник предпринимательского (коммерческого) права. 2011, № 5:
25. **Патнэм Х.**, Разум, истина и история. Пер. с англ. Т.А. Дмитриева, М.В. Лебедева. М.: Изд. Праксис, 2002:
26. **Планк М.**, Научная автобиография // Избранные труды. М.: Изд. Наука, 1975, էջ 649-663:
27. **Пронина М. П.**, Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Н.Новгород, 2010:
28. **Пугинский Б. И.**, Инструментальная теория правового регулирования // Вестник Московского университета: Серия 11: Право. 2011, № 3:
29. **Савиньи фон Ф. К.**, Система современного римского права: В 8 т. Т. II. / Пер. с нем. Г. Жигулина. Под ред. О. Кутателадзе, В. Зубаря. М.: Изд. Статут, 2012:

30. **Сырых В. М.**, История и методология юридической науки: учебник. М.: Изд. Норма, 2018:
31. **Угренинова Е. А.**, Презумпции в российской государственно-правовой традиции: дисс. канд. юрид. наук. Москва, 2013:
32. **Фаткуллин Ф. И.**, Проблемы теории государства и права. Казань: Изд. Казанск. ун-та, 1987:
33. **Федосова В. А.**, Эффективность действия норм советского государственного права. Воронеж: Изд. Воронеж. ун-та 1984:
34. **Филиппова С. Ю.**, Инструментальный подход в науке частного права. М.: Изд. Статут, 2013:
35. **Филиппова С. Ю.**, Инструментальный подход в науке частного права: дисс. докт. юрид. наук. Москва, 2014:
36. **Хабриева Т. Я.**, Экономико-правовой анализ: методологический подход // Журнал российского права. 2010, № 12:
37. **Шершеневич Г. Ф.**, Наука гражданского права в России. М.: Изд. Статут, 1920:
38. **Шундинов К. В.**, Инструментальная теория права - перспективное направление научного исследования // Правоведение. 2002, № 2:
39. **Юдин Э. Г.**, Методология науки. Системность. Деятельность. М.: Изд. Эдиториал УРСС, 1997:
40. **Ringen, J. D.**, Adaptation, teleology, and selection by consequences. Journal of Applied Behavior Analysis. 1993:

Сдана/Հանձնվել է՝ 02.03.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 10.03.2021

Принята/Ընդունվել է՝ 13.03.2021